թյան հիմնական արդյունքները և մի շարք գիտական զեկուցումներ։

Ընդհանուր ժողովին մասնակցում էին ընկ. ընկ. Կ. Մ. Դեմիրճյանը, Բ. Ն. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Ավետյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը։

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Հունվարի 19-ին տեղի ունեցավ ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի համատեղ գիտատեսական կոնֆերանսը՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակին։

Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ներսիսյանը։ Մեկուկես դար է անցել այն պատմական օրերից, ասաց նա, երբ իրականացավ հայ ժողովրդի վաղեմի երազանքը՝ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ։ Այդ հաղթանակը ձեռք բերվեց ռուս զինվորների և հայ աշխարհազորայինների միասնական պայքարով։ 1828 թ. փետրվարին, Թուրքմենչայ գյուղում կնքված պայմանագիրը հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցավ։ Հայ ժողովրդի մի ստվար հատված հնարավորություն ստացավ ապրելու անհամեմատ խաղաղ ու ապահով պայմաններում և գոյատևելու ռուսական հզոր տերության հովանու տակ։ Ռուսաստանի շնորհիվ ազատագրված Հայաստանը թևակոխեց պատմական առաջընթացի ուղին։ Ստեղծվեց սոցիալիստական հեղափոխության համար հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ռուսական պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ միավորելու նախադրյալներ, ռեալ հեռանկարներ բացվեցին նրա սոցիալական ու ազգային վերածննդի համար։ Հայ ժողովրդի պատմական ճակատագրում իսկական շրջադարձը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հայկական հինավուրց հողի վրա ծածանվեց Լենինի հաղթական դրոշը, Հոկտեմբերի դրոշը։

Կոնֆերանսում «Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման պատմական արմատները» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիայի թղթակից անդամ Գ. Գալոյանը։ Խոսելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման պատմական օբյեկտիվ արմատների, անդրկովկասյան մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման համահնչյունության, այդ ժողովուրդների պատմական կապերի ամրապնդումը պայմանավորող գործոնների մասին, զեկուցողը այնուհետև նշեց, որ չնայած ցարիզմի քաղաքականության նվաճողական բնույթին, Անդրկովկասի միանալը Ռուսաստանին ամբողջությամբ կամավոր երևույթ էր և իրականացվեց օսմանյան ու պարսկական բարբարոսական տիրապետության դեմ մղված երկարատև պայքարի շնորհիվ։ Ռուսաստանի մղած պատերազմները Անդրկովկասի ժողովուրդների համար ունեցել են ազատագրական բնույթ։ Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը նպաստեց արևելահայության հետագա զարգացման ամբողջ ընթացքին և վճռական գործոն հանդիսացավ նրա համախմբման, ազգային և սոցիալական վերածննդի համար։

«1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը և Երևանի ազատագրումը» զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։ Նա հանգամանորեն նկարագրեց Երևանի ազատագրման մանրամասները, նշեց, որ պատմական այդ ակտը խոշոր նշանակություն ունեցավ ռուս-պարսկական պատերազմի հետագա ընթացքի վրա և դարձավ ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրման խորհրդանիշը։ Այնուհետև ընկ. Մ. Ներսիսյանը խոսեց Երևանի բերդի գրավմանը մասնակցած հայ կամավորների և Կովկաս աքսորված դեկաբրիստների մասին, մասնավորապես ցույց տվեց ռուս ազատատենչ այդ սպաների ու զինվորների սխրանքները՝ Հայաստանը պարսիկ խանների ու Թուրք փաշաների ծանր լծից ազատագրելու համար։ Վերջում նա կանգ առավ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական նշանակության հարցի վրա։

Զեկուցումներով հանդես եկան նաև պատմական գիտությունների դոկտոր Լ. Խուրշուդյանը («Սովետական Հայաստանը ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում») և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, ճարտարապետության թեկնածու, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Ջ. Թորոսյանը («Երևանը երեկ, այսօր և վաղը»)։ Գիտատեսական կոնֆերանսի աշխատանքին մասնակցում էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաքյանը։

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ